



ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՛

«Փրայմ Կապիտալ» ՍՊԸ-ի 2023թ-ի
փետրվարի 27-ի խորհրդի թիվ 02/23 որոշմամբ
Խորհրդի նախագահ՝ Սերգեյ Շևչենկո

«ՓՐԱՅՄ ԿԱՊԻՏԱԼ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ՓՈՂԵՐԻ ԼՎԱՅՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ
ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
(նոր խմբագրությամբ)

ԵՐԵՎԱՆ 2023

ԳԼՈՒԽ 1. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

- 1.1. Սույն Կանոնակարգը սահմանում է «Փրայմ Կապիտալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ներքին հսկողության հիմնական գործառույթները, խնդիրները, սկզբունքները, պահանջները և իրականացման կարգը, ինչպես նաև Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման քաղաքականությունը:
- 1.2. Սույն Կանոնակարգի շրջանակներում կարգավորվում են նաև զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց գույքի սառեցմանն առնչվող հարաբերությունները:
- 1.3. Սույն Կանոնակարգը կարգավորում է Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի հետ կապված հարաբերությունները, սահմանում է Ընկերության և Լիազոր մարմնի համագործակցության կարգը, ինչպես նաև Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում վերահսկողության և պատասխանատվության միջոցների կիրառման հարցերը:
- 1.4. Սույն կանոնակարգը մշակվել է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի, ՀՀ ԿԲ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում հաշվետվություն տրամադրող անձանց համար սահմանվող նվազագույն պահանջների վերաբերյալ» կանոնակարգի և ՀՀ ԿԲ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման բարձր ռիսկի և կասկածելիության չափանիշների վերաբերյալ» ուղեցույցի, ինչպես նաև հրապարակային տեղեկատվության (ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում ներգրավված միջազգային հեղինակավոր կառույցների տեղեկատվական բազաներ) հիման վրա:
- 1.5. Սույն Կանոնակարգի պահանջները տարածվում են Ընկերության բոլոր աշխատակիցների վրա:

ԳԼՈՒԽ 2. ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԸ

Սույն Կանոնակարգում օգտագործվում են հետևյալ հասկացությունները և հապավումները.

Ընկերություն – «Փրայմ Կապիտալ» ՍՊԸ,

Կանոնակարգ – «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» կանոնակարգ,

Հաճախորդ - Ընկերության հետ գործարար հարաբերություն հաստատող կամ այդպիսի հարաբերությունների մեջ գտնվող անձ, ինչպես նաև անձ, որն Ընկերությանն առաջարկում է կատարել կամ կատարում է միանգամյա գործարք,

Ավագ ղեկավարություն – սույն կանոնակարգի իմաստով Ընկերության Գործադիր տնօրենը, որն իրավասու է Ընկերության անունից ՓԼ/ԱՖ և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման կանխարգելման հարցերով որոշումներ կայացնել և գործողություններ կատարել.

Ներքին դիտարկումների մարմին - Ընկերության՝ փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման կանխարգելման գործառույթներ իրականացնող ստորաբաժանում կամ աշխատակից: Սույն Կանոնակարգի իմաստով ներքին դիտարկումների մարմնի աշխատակցի պարտականություններն իրականացնում է Ընկերության Գործադիր տնօրենը,

ՀՀ ԿԲ – Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկ,

Օրենք – «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենք,

Լիազոր մարմին – ՀՀ ԿԲ,

Փողերի լվացում (ՓԼ) - Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածով նախատեսված արարք,

Ահաբեկչության ֆինանսավորում (ԱՖ) - Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 310-րդ հոդվածով նախատեսված արարք,

Զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորում (ԶՈՁ ՏՖ) - գույքի տրամադրումը կամ հավաքումն է կամ ֆինանսական ծառայությունների մատուցումը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 153-րդ հոդվածով նախատեսված արարքի կատարման նպատակով,

Նախորդող հանցագործություն - հանցագործություն, որի կատարման արդյունքում ուղղակի կամ անուղղակի ստացվել կամ առաջացել է գույքը,

- Գույք** - Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 121-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված գույք,
- Գործարք** - Ընկերության և հաճախորդի կամ լիազորված անձի միջև, ինչպես նաև հաճախորդի կամ լիազորված անձի և այլ անձի միջև գործարքն է, որը կատարվում է Ընկերության միջոցով կամ հանդիսանում է Ընկերության ուսումնասիրության (դիտարկման) առարկա: Գործարք կարող է համարվել նաև որոշակի գործարքի հիման վրա կամ դրա արդյունքում իրավունքներ և պարտականություններ առաջացնող, փոփոխող կամ դադարեցնող յուրաքանչյուր գործողություն,
- Դրամական փոխանցում** - գործարք, որը ֆինանսական հաստատության միջոցով կատարվում է փոխանցումը կատարողի անունից՝ նպատակ ունենալով այդ կամ այլ ֆինանսական հաստատությունում որոշակի գումար հասանելի դարձնել փոխանցումն ստացողի համար՝ անկախ փոխանցումը կատարողի և փոխանցումն ստացողի՝ նույն անձը լինելու հանգամանքից,
- Միանգամյա գործարք** - գործարք, որի արդյունքում պարբերական ծառայությունների տրամադրման պարտավորություններ չեն առաջանում, և (կամ) որը գործարար հարաբերության հաստատում չի ենթադրում,
- Փոխկապակցված միանգամյա գործարքներ** - միևնույն կողմի մասնակցությամբ միատեսակ բնույթի միանգամյա գործարքներ, որոնք կատարվում են 24 ժամվա ընթացքում,
- Գործարար հարաբերություն** - Ընկերության կողմից հաճախորդին մատուցվող պարբերական ծառայություններ, որոնք չեն սահմանափակվում մեկ կամ մի քանի միանգամյա գործարքներով:
- Իրական շահառու** - ֆիզիկական անձ, որի անունից կամ օգտին հաճախորդն իրականում գործում է, և (կամ) որն իրականում (փաստացի) վերահսկում է հաճախորդին կամ այն անձին, որի անունից կամ օգտին գործարքը կատարվում է, կամ գործարար հարաբերությունը հաստատվում է: Իրավաբանական անձի, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի, իրական շահառու է համարվում այն ֆիզիկական անձը, որը՝
- ա. ուղղակի կամ անուղղակի տիրապետում է տվյալ իրավաբանական անձի՝ ձայնի իրավունք տվող բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայերի) 20 և ավելի տոկոսին կամ ուղղակի կամ անուղղակի կերպով ունի 20 և ավելի տոկոս մասնակցություն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում,
 - բ. տվյալ իրավաբանական անձի նկատմամբ իրականացնում է իրական (փաստացի) վերահսկողություն այլ միջոցներով,
 - գ. հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի գործունեության ընդհանուր կամ ընթացիկ ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձ այն դեպքում, երբ

առկա չէ սույն կետի «ա» և «բ» ենթակետերի պահանջներին համապատասխանող ֆիզիկական անձ,

Լիազորված անձ - հաճախորդի հանձնարարությամբ և հաճախորդի անունից գործարքի կատարման կամ գործարար հարաբերությունում որոշակի իրավաբանական կամ փաստացի գործողությունների իրականացման լիազորություն ունեցող, այդ թվում՝ լիազորագրով կամ օրենքով սահմանված այլ հիմքով հաճախորդի կողմից տրված լիազորությունների հիման վրա ներկայացուցչություն իրականացնող անձ,

Գործարքի մյուս կողմ - հաճախորդի կողմից իրականացվող գործարքի այլ մասնակից, որը տրամադրում (փոխանցում) կամ որին հասցեագրվում է գործարքից բխող գույքը,

Հաճախորդի գործարար բնութագիր - հաճախորդի գործունեության բնույթի, ազդեցության ու նշանակության, գործարար հարաբերությունների և միանգամյա գործարքների առկա ու ակնկալվող շարժի, ծավալների և ոլորտների, լիազորված անձանց և իրական շահառուների առկայության, ինքնության ու փոխկապակցվածության բնույթի, ինչպես նաև հաճախորդի գործունեությանը վերաբերող այլ փաստերի և հանգամանքների վերաբերյալ հաշվետվություն տրամադրող անձի տեղեկությունների (պատկերացումների) ամբողջություն,

Հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն - Ընկերության կողմից հաճախորդի վերաբերյալ պատշաճ պատկերացում կազմելու նպատակով նրա ինքնության և գործարար բնութագրի վերաբերյալ ռիսկերի վրա հիմնված մոտեցման կիրառմամբ տեղեկություններ (ներառյալ՝ փաստաթղթեր) ձեռք բերելու ու վերլուծության գործընթաց, որը ներառում է Օրենքով, Լիազոր մարմնի նորմատիվ իրավական ակտերով և սույն կանոնակարգով նախատեսված գործողությունների իրականացում,

Ռիսկ - փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման վտանգավորության և դրա հավանականության մասին վկայող հանգամանք, որը կարող է բնութագրվել ըստ երկրների կամ աշխարհագրական տեղակայման, հաճախորդների տեսակի, գործարքների կամ գործարար հարաբերությունների տեսակի, ծառայությունների տեսակի կամ այլ չափանիշների,

Հաճախորդի պարզեցված ուսումնասիրություն - հաշվետվություն տրամադրող անձի կողմից հաճախորդի պատշաճ ուսումնասիրության գործընթացի սահմանափակ կիրառում, որի դեպքում նույնականացում և ինքնության ստուգում իրականացնելիս հավաքվում են Օրենքով, Լիազոր մարմնի ընդունած նորմատիվ իրավական ակտերով և սույն Կանոնակարգով նախատեսված տեղեկություններ,

Հաճախորդի հավելյալ ուսումնասիրություն - Ընկերության կողմից հաճախորդի պատշաճ ուսումնասիրության գործընթացի ընդլայնված կիրառում, որն, ի լրումն հաճախորդի պատշաճ ուսումնասիրությամբ սահմանված գործողությունների, ներառում է նաև Օրենքով, Լիազոր մարմնի նորմատիվ իրավական ակտերով և սույն Կանոնակարգով նախատեսված գործողությունների իրականացում,

Քարծր ռիսկի չափանիշ - Օրենքով, Լիազոր մարմնի իրավական ակտերով, սույն Կանոնակարգով սահմանված այնպիսի չափանիշ է, որը վկայում է փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման բարձր հավանականության մասին,

Ցածր ռիսկի չափանիշ - Օրենքով կամ Լիազոր մարմնի իրավական ակտերով սահմանված այնպիսի չափանիշ, որը վկայում է փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման ցածր հավանականության մասին,

Քաղաքական ազդեցություն ունեցող անձ – Օրենքի 3-րդ հոդվածի 25-րդ կետով սահմանված անձ:

Միջազգային կազմակերպություն - անդամ երկրների միջև միջազգային պայմանագրի կարգավիճակ ունեցող պաշտոնական քաղաքական համաձայնության հիման վրա ստեղծված կազմակերպություն, որն իր գտնվելու վայրի երկրում ռեզիդենտ կառուցվածքային միավոր չի համարվում,

Կենսական շահերի կենտրոն - այն վայրն է, որտեղ կենտրոնացած են անձի ընտանեկան կամ տնտեսական շահերը: Ընտանեկան կամ տնտեսական շահը կարող է դրսևորվել այն վայրում, որտեղ գտնվում է անձի բնակելի տունը (բնակարանը), որտեղ բնակվում է անձը և (կամ) նրա ընտանիքը, որտեղ գտնվում է նրա (ընտանիքի) անձնական կամ ընտանեկան հիմնական գույքը կամ հիմնական տնտեսական (մասնագիտական) գործունեության իրականացման վայրը,

Կասկածելի գործարք կամ գործարար հարաբերություն - գործարք կամ գործարար հարաբերություն, այդ թվում՝ գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման փորձ, որի դեպքում կասկածվում է կամ բավարար հիմքեր կան կասկածելու, որ գույքը ստացվել է հանցավոր ճանապարհով կամ կապված է ահաբեկչության, ահաբեկչական գործողությունների, ահաբեկչական կազմակերպությունների կամ անհատ ահաբեկիչների կամ ահաբեկչությունը ֆինանսավորողների հետ, կամ օգտագործվել է կամ առկա է մտադրություն այն օգտագործելու ահաբեկչության նպատակով կամ ահաբեկչական կազմակերպությունների կամ անհատ ահաբեկիչների կամ ահաբեկչությունը ֆինանսավորողների կողմից,

Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշ - սույն Կանոնակարգով և Լիազոր մարմնի իրավական ակտերով սահմանված փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման հնարավորության մասին վկայող իրավիճակ կամ ազդակ,

Գործարքի կամ գործարար հարաբերության կասեցում - կասկածելի գործարքի և (կամ) գործարար հարաբերության առարկա գույքի փաստացի և իրավաբանական շարժի ժամկետային արգելք,

Գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժում - գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման համար նախատեսված գործողություններ չիրականացնելը,

Գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցում - գործարքի կատարման կամ գործարար հարաբերության իրականացման ընդհատում,

Գույքի սառեցում - ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանող կամ նրանց կողմից վերահսկվող գույքի փաստացի և (կամ) իրավաբանական շարժի անորոշ ժամկետով արգելք, այդ թվում՝ այդ գույքի ուղղակի կամ անուղղակի տիրապետման, օգտագործման կամ տնօրինման արգելք, ինչպես նաև որևէ գործարար հարաբերության (ներառյալ՝ ֆինանսական ծառայությունների) կամ միանգամյա գործարքների հաստատման կամ իրականացման արգելք,

Պատժամիջոցների ցանկ - ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի, ԱՄՆ արտաքին ակտիվների վերահսկման գրասենյակի (OFAC), ԵՄ պատժամիջոցների ցանկեր, ինչպես նաև Լիազոր մարմնի կողմից տրված հանձնարարականներ,

ՓԼ/ԱՖ – Փողերի լվացում և ահաբեկչության ֆինանսավորում,

ՖԴԿ – Ֆինանսական դիտարկումների կենտրոն

**ԳԼՈՒԽ 3. ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՈՂՆՉԱՑՄԱՆ
ԶԵՆՔԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ ԵՎ
ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

- 3.1. Ընկերությունը պետք է բացահայտի և գնահատի իր՝ ՓԼ/ԱՖ, ինչպես նաև ԶՈՁ ՏՖ հնարավոր և առկա ռիսկերը և ունենա բացահայտված ռիսկերի արդյունավետ կառավարման և զսպման քաղաքականություն, վերահսկման մեխանիզմներ և ընթացակարգեր:
- 3.2. ՓԼ/ԱՖ և ԶՈՁ ՏՖ ռիսկերը գնահատելիս, մինչև ռիսկի ընդհանուր մակարդակը բնորոշելը և ռիսկերի զսպման համապատասխան մակարդակ սահմանելը, Ընկերությունը պետք է հաշվի առնի ռիսկի բոլոր գործոնները և կարող է իրականացնել տարբերակված միջոցառումներ՝ ռիսկի տեսակին և մակարդակին համապատասխան:
- 3.3. Ընկերությունը պետք է պարբերաբար, բայց ոչ ուշ, քան տարին մեկ անգամ վերանայի իր՝ ՓԼ/ԱՖ, ինչպես նաև ԶՈՁ ՏՖ հնարավոր և առկա ռիսկերը:
- 3.4. Ընկերությունը, ի թիվս ՓԼ/ԱՖ այլ ռիսկերի, պետք է բացահայտի և գնահատի ծառայությունների նոր տեսակների մատուցման կամ դրանց մատուցման եղանակների գործարկման, ինչպես նաև նոր կամ զարգացող տեխնոլոգիաների կիրառման հետ կապված հնարավոր և առկա ռիսկերը: Ընդ որում, այս գործընթացը պետք է իրականացնի համապատասխանաբար մինչև ծառայությունների նոր տեսակների մատուցումը կամ դրանց մատուցման եղանակների գործարկումը կամ նոր կամ զարգացող տեխնոլոգիաների կիրառումը:
- 3.5. Ընկերությունը, Օրենքին և դրա հիման վրա ընդունված իրավական ակտերին համապատասխան, պարտավոր է Լիազոր մարմին ներկայացնել ՓԼ/ԱՖ վերաբերյալ սահմանված տեղեկությունները, այդ թվում՝ օրենքով սահմանված գաղտնիք պարունակող տեղեկությունները:
- 3.6. Համաձայն Օրենքի և սույն Կանոնակարգի պահանջների ՓԼ/ԱՖ և ԶՈՁ ՏՖ կանխարգելման շրջանակներում Ընկերությունը՝
 - Բացահայտում և Լիազոր մարմին հաշվետվություն է ներկայացնում կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության և (կամ) պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ,
 - Իրականացնում է հաճախորդի, այդ թվում՝ առկա հաճախորդի և գործարար հարաբերության պատշաճ ուսումնասիրություն (անհրաժեշտության դեպքում՝ նաև հավելյալ ուսումնասիրություն),
 - Բացահայտում է իրական շահառուի առկայության փաստը,

- Իրականացնում է հաճախորդի և գործարար հարաբերության ռիսկայնության գնահատում,
- Թարմացնում է պատժամիջոցների ցանկերում ներառված անձանց տվյալները և համեմատում է իր կողմից սպասարկվող հաճախորդների տվյալների հետ, համընկման դեպքում ՀՀ ԿԲ ՖԴԿ ներկայացնում է կասկածելի գործաքի հաշվետվություն:

Բոլոր վերոնշյալ գործողությունները իրականացվում են պարբերաբար և շարունակական հիմքով համաձայն սույն կանոնակարգի ընթացակարգի:

ԳԼՈՒԽ 4. ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾԱՐՔԸ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

- 4.1. Ընկերությունը Լիազոր մարմին հաշվետվություն է ներկայացնում կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության և (կամ) պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ:
- 4.2. Ընկերությունը հաշվետվություն է ներկայացնում Լիազոր մարմնի ՖԴԿ հետևյալ պարտադիր տեղեկացման ենթակա գործարքների վերաբերյալ.
 1. անկանխիկ գործարքներ, որոնց գումարը հավասար է կամ գերազանցում է 20 միլիոն ՀՀ դրամը,
 2. կանխիկի հետ կապված գործարքներ, որոնց գումարը հավասար է կամ գերազանցում է 5 միլիոն ՀՀ դրամը,
 3. կասկածելի որակված գործարքներ կամ գործարար հարաբերություններ, անկախ 1-ին և 2-րդ կետերով նախատեսված գործարքի գումարի չափից:
- 4.3. 4.2. կետով սահմանված գործարքների վերաբերյալ հաշվետվության տրամադրման պարտականությունից ազատելու դեպքերը, ըստ գործարքների տեսակների, դեպքերի և (կամ) սահմանաչափերի, սահմանում է Լիազոր մարմինը: Արգելվում է այն անձին, որի վերաբերյալ հաշվետվություն կամ այլ տեղեկատվություն է տրամադրվում Լիազոր մարմնին, ինչպես նաև այլ անձանց հայտնել հաշվետվության կամ այդ տեղեկատվության տրամադրման կամ չտրամադրման, այդ թվում՝ Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն հանձնարարականների ստացման կամ չստացման փաստի մասին:
- 4.4. 4.2. կետով նախատեսված հաշվետվությունների կազմման և Լիազոր մարմնին տրամադրման կարգը սահմանվում է Օրենքով, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով և սույն Կանոնակարգով:
- 4.5. 4.2. կետով նախատեսված հաշվետվությունների կազմումն ապահովելու համար Ընկերության աշխատակիցները գործարքը կատարելու կամ կասկածելի գործարքի հիմքը (գործարար հարաբերությունը) հայտնաբերելու օրը ներքին դիտարկումների

մարմնի աշխատակցին են տրամադրում հաշվետվությունը կազմելու և Լիազոր մարմնին ներկայացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերն ու տեղեկությունները (Հավելված 1), որոնց հիման վրա Ներքին դիտարկումների աշխատակիցը կազմում և ՖԴԿ է ներկայացնում նախատեսված հաշվետվությունները գործարար հարաբերության հաստատման կամ գործարքի կատարման օրվանից հետո 3 (երեք) աշխատանքային օրում:

- 4.6. Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի կամ կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունը ՖԴԿ է ներկայացվում էլեկտրոնային տարբերակով՝ ՍԻ-ԲԻ-ԷՅ Նեթ համակարգի միջոցով, կամ թղթային տարբերակով:
- 4.7. ՖԴԿ-ն պետք է ապահովի ստացվող, վերլուծվող և տրամադրվող տեղեկությունների համար անվտանգ պահպանության անհրաժեշտ պայմաններ: Այդ տեղեկությունները կարող են հասանելի լինել միայն օրենքով սահմանված կարգով իրավասու մարմինների կամ անձանց համար:
- 4.8. ՖԴԿ այն աշխատակիցները, որոնց հասանելի են ստացվող, վերլուծվող և տրամադրվող տեղեկությունները, օրենքով և Լիազոր մարմնի իրավական ակտերով սահմանված կարգով պահպանում են գաղտնիք հանդիսացող տեղեկություններն իրենց պարտականությունների կատարման ընթացքում և դրանց դադարումից հետո, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն են կրում դրա անօրինական հրապարակման համար:

ԳԼՈՒԽ 5. ՀԱՃԱԽՈՐԴԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

- 5.1. Ընկերությունը կարող է հաճախորդի հետ գործարար հարաբերություն հաստատել կամ միանգամյա գործարք կատարել միայն **հաճախորդի նույնականացման** համար սույն գլխով սահմանված տեղեկությունները (ներառյալ՝ փաստաթղթերը) ստանալուց և հաճախորդի ինքնությունը ստուգելուց հետո: Ընկերությունը կարող է նույնականացման համար պահանջվող տեղեկությունների հիման վրա հաճախորդի ինքնությունը ստուգել նաև գործարար հարաբերություն հաստատելու ընթացքում կամ դրանից հետո ողջամիտ, բայց ոչ ավելի, քան յոթնօրյա ժամկետում, եթե ռիսկն արդյունավետորեն կառավարվում է, և դա անհրաժեշտ է հաճախորդի հետ բնականոն գործարար հարաբերությունները չխափանելու նպատակով:
- 5.2. Ընկերությունը պետք է **հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն** իրականացնի, երբ.
- հաստատվում է գործարար հարաբերություն,
 - կատարվում է միանգամյա գործարք, այդ թվում՝ ներպետական կամ միջազգային դրամական փոխանցում, որի գումարը հավասար է կամ գերազանցում է նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկը, եթե խստացնող այլ դրույթ սահմանված չէ օրենսդրությամբ,
 - կասկածներ են առաջանում հաճախորդի նույնականացմանը վերաբերող՝ նախկինում ձեռք բերված տեղեկությունների (ներառյալ՝ փաստաթղթերի) հավաստիության կամ ամբողջականության վերաբերյալ,
 - կասկածներ են առաջանում ՓԼ/ԱՖ վերաբերյալ:
- 5.1. Հաճախորդի պատշաճ ուսումնասիրության գործընթացը ներառում է հաճախորդին (այդ թվում՝ լիազորված անձին և իրական շահառուին) նույնականացնելը և նրա ինքնությունը ստուգելը, գործարքի կամ գործարար հարաբերության նպատակը և նախատեսվող բնույթը պարզելը, ինչպես նաև գործարար հարաբերության ամբողջ ընթացքում (ներառյալ՝ հաճախորդի հետ գործարար հարաբերություն հաստատելու պահը) ընթացիկ պատշաճ ուսումնասիրություն իրականացնելը:
- 5.2. Ընկերությունը, հաճախորդին նույնականացնելիս և նրա ինքնությունը ստուգելիս, հաշվի է առնում.
- **Ֆիզիկական անձանց կամ անհայր ձեռնարկատերերի համար** անձը հաստատող փաստաթղթի կամ բացառապես լուսանկարով պաշտոնական այլ փաստաթղթերի հիման վրա ձեռք բերվող տեղեկությունն առնվազն պետք է ներառի՝ անձի անունը, ազգանունը, քաղաքացիությունը,

հաշվառման հասցեն (առկայության դեպքում), ծննդյան տարին, ամիսը, ամսաթիվը, վայրը, անձը հաստատող փաստաթղթի սերիան, համարը, տրամադրման տարին, ամիսը, ամսաթիվը, իսկ անհատ ձեռնարկատերերի համար՝ նաև հաշվառման համարը և հարկ վճարողի հաշվառման համարը, ինչպես նաև օրենսդրությամբ և Ընկերության այլ ներքին իրավական ակտերով պահանջվող այլ տեղեկություններ,

- **իրավաբանական անձանց համար** պետական գրանցման փաստաթղթի կամ պաշտոնական այլ փաստաթղթերի հիման վրա ձեռք բերվող տեղեկությունները պետք է առնվազն ներառեն իրավաբանական անձի անվանումը, գտնվելու վայրը, գործունեության իրականացման վայրը (եթե տարբերվում է իրավաբանական անձի գտնվելու վայրից), կանոնադրությունը կամ համանման այլ փաստաթուղթը, անհատականացման համարը (պետական գրանցման, հաշվառման համարը և այլն), գործունեության ընթացիկ ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձի (մարմնի անդամի) անունը, ազգանունը և առկայության դեպքում հարկ վճարողի հաշվառման համարը, ինչպես նաև օրենսդրությամբ և Ընկերության այլ ներքին իրավական ակտերով պահանջվող տեղեկություններ,
- **պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի համար** ձեռք բերվող տեղեկությունները պետք է առնվազն ներառեն պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի լրիվ պաշտոնական անվանումը և երկիրը:

5.3. Ընկերությունը պետք է հասկանա հաճախորդի գործարար բնութագիրը, գործարքի կամ գործարար հարաբերության նպատակը և նախատեսվող բնույթը, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, ձեռք բերի տեղեկություններ գործարքի կամ գործարար հարաբերության նպատակի և նախատեսվող բնույթի մասին:

5.4. Ընկերությունը միջոցներ է ձեռնարկում պարզելու համար, թե արդյոք հաճախորդը, նրա ընտանիքի անդամը կամ նրա հետ փոխկապակցված անձը հանդիսանում է Քաղաքական ազդեցություն ունեցող անձ:

5.5. Ընկերությունը միջոցներ է ձեռնարկում պարզելու համար, թե արդյոք հաճախորդը հանդես է գալիս իր կամ այլ անձի անունից և (կամ) օգտին: Այդ նպատակով Ընկերությունը պետք է՝

- նույնականացնի լիազորված անձին (առկայության դեպքում), ստուգի նրա ինքնությունը և հաճախորդի անունից հանդես գալու նրա լիազորությունը ըստ 5.2. կետի կանոնների,
- նույնականացնի իրական շահառուին և ողջամիտ քայլեր ձեռնարկի նրա ինքնությունն ստուգելու նպատակով՝ արժանահավատ աղբյուրներից ստացված տեղեկությունների հիման վրա:

- 5.6. Իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդների դեպքում Ընկերությունը պետք է լիարժեք տեղեկատվություն ունենա այդ իրավաբանական անձի մասնակիցների և կառավարման մարմինների լիազորությունների վերաբերյալ:
- 5.7. Եթե հաճախորդն օտարերկրյա իրավաբանական անձ կամ օտարերկրյա ֆիզիկական անձ կամ օտարերկրյա օրենսդրությամբ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող անձ է, ապա Ընկերությունը պարտավոր է պարզել և գրառել նաև այդ անձի Կենսական շահերի կենտրոնը՝ ձեռնարկելով համապատասխան միջոցներ անհրաժեշտ տեղեկատվության ապահովման ուղղությամբ (Հավելված 2): «Կենսական շահերի կենտրոնի վերաբերյալ հայտարարություն»-ը գործարար հարաբերության ընթացքում լրացվում է նաև, երբ փոխվում է սկզբնական հայտարարությամբ ներկայացված կենսական շահերի կենտրոնը:
- 5.8. Օրենքով նախատեսված պայմանների առկայության դեպքում հաճախորդի պատշաճ ուսումնասիրությունն իրականացնելիս Ընկերության համար հիմք կարող են ծառայել Օրենքի իմաստով այլ ֆինանսական հաստատության կամ ոչ ֆինանսական հաստատության կամ անձի կողմից հաճախորդի պատշաճ ուսումնասիրության արդյունքում ստացված տվյալները:
- 5.9. Ցածր ռիսկի դեպքում Ընկերությունը կարող է իրականացնել **հաճախորդի պարզեցված ուսումնասիրություն** (պարզեցված ուսումնասիրություն չի կարող իրականացվել գործարքի կամ գործարար հարաբերության կասկածելիության դեպքում), որը Ընկերության կողմից հաճախորդի պատշաճ ուսումնասիրության գործընթացի սահմանափակ կիրառումն է: Այս դեպքում նույնականացում և ինքնության ստուգում իրականացնելիս հավաքվում են հետևյալ տեղեկությունները.
- **Ֆիզիկական անձանց համար**՝ անունը, ազգանունը և անձը հաստատող փաստաթղթի տվյալները, իսկ լիազորված անձի առկայության դեպքում՝ նաև նրան նույնականացնող տեղեկությունները,
 - **իրավաբանական անձանց համար**՝ անվանումը, պետական գրանցման համարը, բանկային հաշիվները տնօրինելու իրավասություն ունեցող և/կամ լիազոր անձին նույնականացնող տեղեկությունները,
 - **պետական մարմնի և տեղական ինքնակառավարման մարմնի համար**՝ լրիվ պաշտոնական անվանումը:
- 5.10. Ընկերությունը իրականացնում է հաճախորդի **հավելյալ ուսումնասիրություն** այն դեպքերում, երբ հաճախորդը և (կամ) նրա կողմից իրականացված գործարքը դասակարգվել են բարձր ռիսկի չափանիշների, կամ Ընկերությունը Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետին համաձայն ստացել է Լիազոր մարմնի հանձնարարականը՝ հաճախորդի հավելյալ ուսումնասիրություն իրականացնելու մասին: Հաճախորդի հավելյալ ուսումնասիրության դեպքում ի լրումն հաճախորդի

պատշաճ ուսումնասիրությամբ սահմանված գործողությունների, անհրաժեշտ է նաև առնվազն՝

- ստանալ ավագ ղեկավարության հավանությունը՝ հաճախորդի հետ գործարար հարաբերություն հաստատելուց առաջ, գործարար հարաբերությունը շարունակելու համար, ինչպես նաև այն դեպքերում, երբ հետագայում պարզվում է, որ հաճախորդը կամ իրական շահառուն բնութագրվում է բարձր ռիսկի չափանիշով, կամ գործարքը կամ գործարար հարաբերությունը ներառում են այդպիսի չափանիշ,
- ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ՝ հաճախորդի, ինչպես նաև Քաղաքական ազդեցություն ունեցող անձ հանդիսացող իրական շահառուի եկամուտների և ունեցվածքի աղբյուրը պարզելու համար,
- հնարավորին չափ մանրամասն ուսումնասիրել գործարքի կամ գործարար հարաբերության նախապայմանները և նպատակը,
- Քաղաքական ազդեցություն ունեցող անձի դեպքում իրականացնել ընթացիկ հավելյալ դիտարկում:

ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԻԿ ՊԱՏՇԱՃ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

- 5.11. Ընկերությունը գործարար հարաբերության ամբողջ ընթացքում պետք է իրականացնի դրա պատշաճ ուսումնասիրություն: Գործարար հարաբերության **ընթացիկ պատշաճ ուսումնասիրությունը** ներառում է Ընկերության կողմից հաճախորդի հետ գործարքների դիտանցումը՝ հաճախորդի, նրա գործարար բնութագրի և ռիսկայնության վերաբերյալ առկա տեղեկությունների հավաստիության, այդ տեղեկությունների հետ հաճախորդի գործունեության համադրելիության, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև հաճախորդի եկամուտների և ունեցվածքի աղբյուրի իսկության հարցում հավաստիանալու նպատակով:
- 5.12. Ընկերությունը պետք է իր սահմանած հաճախականությամբ թարմացնի հաճախորդի պատշաճ (այդ թվում՝ հավելյալ կամ պարզեցված) ուսումնասիրության շրջանակում հավաքագրված տեղեկությունները՝ դրա արդիականության ու վերաբերելիության հարցում հավաստիանալու նպատակով: Հաճախորդի նույնականացման և ինքնության ստուգման արդյունքում ձեռք բերված տեղեկությունների թարմացման համար սահմանված հաճախականությունը պետք է լինի ոչ պակաս, քան տարին մեկ անգամ:
- 5.13. *Միջին (ստանդարտ) ռիսկի* դեպքում իրականացվում է հաճախորդի պատշաճ ուսումնասիրության՝ որի շրջանակներում Ընկերությունը, ի կատարումն այդ կետով

և Օրենքի համապատասխան այլ դրույթներով միջին (ստանդարտ) ռիսկի դեպքում սահմանված պահանջների, իրականացնում է գործարար հարաբերության ընթացիկ պատշաճ ուսումնասիրության կանոնավոր միջոցառումներ: Գործարար հարաբերության ընթացիկ պատշաճ ուսումնասիրության շրջանակներում հաճախորդի հետ գործարքների դիտանցման նպատակով Ընկերությունը միջին (ստանդարտ) ռիսկի դեպքում ձեռնարկում է հետևյալ միջոցառումները.

- ստուգում է գործարքի կամ գործարար հարաբերության առնչությամբ հաճախորդից պահանջվող տեղեկությունների (ներառյալ՝ փաստաթղթերի) իսկությունը և հավաստիությունը՝ անհրաժեշտության դեպքում օգտվելով տեղեկատվության սահմանափակ մատչելիությամբ և հանրամատչելի աղբյուրներից, կատարելով հարցումներ իրավասու մարմիններին և այլ հաշվետու անձանց, ինչպես նաև օտարերկրյա գործընկերներին,
- համադրում է հաճախորդի՝ միավոր ժամանակահատվածում տարբեր գործարքներով շրջանառող միջոցների աղբյուրները, շարժը և ծավալները,
- պարզում է հաճախորդների, գործարքների և գործարար հարաբերությունների միջև կապերի առկայությունը,
- ստուգում է գործարքի կամ գործարար հարաբերության համադրելիությունը հաճախորդի գործարար բնութագրին,
- ներքին իրավական ակտով սահմանված դեպքում՝ պարզում է հաճախորդի եկամուտների և ունեցվածքի աղբյուրը,
- ձեռնարկում է ներքին իրավական ակտերով սահմանված այլ միջոցառումներ:

5.14. *Ցածր ռիսկի* դեպքում Ընկերությունը, գործարար հարաբերության ընթացիկ պատշաճ ուսումնասիրության շրջանակներում հաճախորդի հետ գործարքների դիտանցման նպատակով, ձեռնարկում է հետևյալ նվազեցված միջոցառումները.

- ստուգում է գործարքի կամ գործարար հարաբերության առնչությամբ հաճախորդից պահանջվող տեղեկությունների (ներառյալ՝ փաստաթղթերի) իսկությունը և հավաստիությունը՝ հիմք ընդունելով հաճախորդի տրամադրած տեղեկատվությունը,
- համադրում է հաճախորդի՝ միավոր ժամանակահատվածում տարբեր գործարքներով շրջանառող միջոցների աղբյուրները, շարժը և ծավալները միայն այն դեպքում, երբ դրանք գերազանցում են հաճախորդի գործարար բնութագրի տեսանկյունից ողջամիտ գումարային սահմանաչափը,
- պարզում է հաճախորդների, գործարքների և գործարար հարաբերությունների միջև կապերի առկայությունը միայն այն դեպքում, երբ ի հայտ են եկել միջին (ստանդարտ) կամ բարձր ռիսկայնության հաճախորդների, գործարքների կամ գործարար հարաբերությունների հետ կապեր:

5.15. *Քարծր ռիսկի* առկայության դեպքում Ընկերությունը իրականացնում է գործարար հարաբերության ընթացիկ պատշաճ ուսումնասիրության հետևյալ խորացված միջոցառումները.

- գործարքի կամ գործարար հարաբերության առնչությամբ հաճախորդից պահանջվող տեղեկությունների (ներառյալ՝ փաստաթղթերի) իսկությունը և հավաստիությունը ստուգելիս պահանջում է անհրաժեշտ տեղեկություններ (ներառյալ՝ լրացուցիչ փաստաթղթեր), օգտվում է տեղեկատվության սահմանափակ մատչելիությամբ և հանրամատչելի աղբյուրներից, կատարում է հարցումներ հնարավոր մեծ թվով իրավասու մարմինների և այլ հաշվետու անձանց, ինչպես նաև օտարերկրյա գործընկերներին,
- հաճախորդի՝ տարբեր գործարքներով շրջանառող միջոցների աղբյուրները, շարժը և ծավալները համադրելիս ընտրում է հնարավորին ավելի երկար կամ մի քանի համադրելի միավոր ժամանակահատված,
- հաճախորդների, գործարքների և գործարար հարաբերությունների միջև կապերի առկայությունը պարզելիս կատարում է դրանց բազմաստիճան վերլուծություն, այդ թվում՝ հնարավոր անուղղակի կապերը բացահայտելու նպատակով,
- հաճախորդի գործարար բնութագրին որևէ գործարքի կամ գործարար հարաբերության համադրելիությունը ստուգելիս՝ պահանջում է դրանց շրջանակներում կատարված գործողությունները լիարժեքորեն հիմնավորող տեղեկություններ (ներառյալ՝ փաստաթղթեր),
- հաճախորդի եկամուտների և ունեցվածքի աղբյուրը պարզելիս՝ պահանջում է դրանց օրինականությունը հիմնավորող տեղեկություններ (ներառյալ՝ փաստաթղթեր),
- ձեռնարկում է այլ գործողություններ:

5.16. Հաճախորդի ընթացիկ պատշաճ ուսումնասիրության շրջանակներում դիտանցումը կատարվում է գործարար հարաբերության ամբողջ ընթացքում (ներառյալ՝ հաճախորդի հետ գործարար հարաբերություն հաստատելու պահը), ընդ որում՝ նախատեսված միջոցառումները, բացառությամբ, երբ Ընկերությունը իր ներքին իրավական ակտով սահմանում է այլ ժամկետ, պետք է ձեռնարկվեն ոչ ուշ, քան.

- տարին մեկ անգամ՝ միջին (ստանդարտ) ռիսկի դեպքում,
- վեց ամիսը մեկ անգամ՝ բարձր ռիսկի դեպքում, բացառությամբ Քաղաքական ազդեցություն ունեցող անձանց համար նախատեսված դեպքի:

5.17. Հաճախորդի պատշաճ ուսումնասիրության շրջանակում հավաքված տեղեկությունների (բացառությամբ հաճախորդի նույնականացման և ինքնության ստուգման արդյունքում ձեռք բերված տեղեկությունների) թարմացումը,

բացառությամբ, երբ Ընկերությունը իր ներքին իրավական ակտով սահմանում է այլ ժամկետ, կատարվում է ոչ ուշ, քան.

- տարին մեկ անգամ՝ միջին (ստանդարտ) ռիսկի դեպքում,
- վեց ամիսը մեկ անգամ՝ բարձր ռիսկի դեպքում, բացառությամբ՝ Քաղաքական ազդեցություն ունեցող անձանց համար նախատեսված դեպքի,
- երկու տարին մեկ անգամ՝ ցածր ռիսկի դեպքում:

5.18. Հաճախորդի գործարար բնութագիրը պարզելիս Ընկերությունը պետք է հավաստիանա, որ բավարար տեղեկություններ է ձեռք բերել հաճախորդի՝ Քաղաքական ազդեցություն ունեցող անձ լինելու հանգամանքը պարզելու համար:

5.19. Ընկերությունը, մինչև գործարար հարաբերության հաստատումը կամ միանգամյա գործարքի կնքումը պարզում է իրական շահառուի առկայությունը և առկայության դեպքում նույնականացնում է իրական շահառուին և ողջամիտ քայլեր է ձեռնարկում նրա ինքնությունը ստուգելու համար: Լրացվում է «Իրական շահառուի առկայության (բացակայության) վերաբերյալ» հայտարարություն»՝ համաձայն սույն Կանոնակարգի Հավելված 3-ի: Իրավաբանական անձ Հաճախորդների դեպքում Ընկերությունը լիարժեք տեղեկատվություն է ձեռք բերում իրավաբանական անձի մասնակիցների և կառավարման մարմինների լիազորությունների վերաբերյալ: «Իրական շահառուի առկայության վերաբերյալ հայտարարություն»-ը գործարար հարաբերության ընթացքում փոխվում է իրական շահառուի փոխվելու դեպքում: Ընկերության ձեռնարկած քայլերը, եզրահանգումները և դրանց հիմնավորումները փաստաթղթավորվում և պահվում են Օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

ՀԱՃԱԽՈՐԴԻ ՊԱՏՇԱԾ ՌԻՍԻՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

5.20. Ընկերությունը հաճախորդի հետ գործարար հարաբերություն հաստատելիս նրանից պահանջում է սույն Կանոնակարգով սահմանված, նրան նույնականացնելու և պատշաճ ուսումնասիրություն իրականացնելու համար բոլոր անհրաժեշտ տեղեկությունները: Ընկերությունը պետք է պահպանի այդ տեղեկությունները (ներառյալ՝ փաստաթղթերը)՝ անկախ նրանից, թե գործարքը կամ գործարար հարաբերությունը շարունակվում է, թե դադարեցվել է, այդ թվում՝

- հաճախորդի նույնականացման տվյալները, այդ թվում՝ հաշվեհամարի և հաշվի շարժի վերաբերյալ տվյալները, ինչպես նաև գործարար թղթակցության տվյալները.
- ներպետական և միջազգային գործարքների կամ գործարար հարաբերությունների վերաբերյալ բոլոր անհրաժեշտ տվյալները (ներառյալ՝ հաճախորդի (և գործարքի մյուս կողմի) անունը, հաշվառման հասցեն (առկայության դեպքում) և բնակության

(գտնվելու) վայրը, գործարքի բնույթը, կատարման ժամկետը, գումարը և արժույթը, առկայության դեպքում նաև՝ հաշվի տեսակը և հաշվեհամարը), որոնք բավարար կլինեն տվյալ գործարքի կամ գործարար հարաբերության ամբողջական պատկերը վերականգնելու համար.

- կասկածելի գործարքների կամ գործարար հարաբերությունների վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև կասկածելի չորակված գործարքների կամ գործարար հարաբերությունների դիտարկման ընթացքի (կատարված վերլուծության) և արդյունքների վերաբերյալ տեղեկությունները.
- փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման հնարավոր և առկա ռիսկերի գնահատման արդյունքները.
- դրամական փոխանցումների հետ կապված տեղեկությունները.
- Օրենքով սահմանված այլ տեղեկություններ:

5.21. Թվարկված տեղեկությունները (ներառյալ՝ փաստաթղթերը) պետք է պահպանվեն գործարար հարաբերության ավարտից կամ գործարքի կատարումից հետո՝ առնվազն 5 տարվա ընթացքում, իսկ օրենքով նախատեսված լինելու դեպքում՝ ավելի երկար ժամկետով: Այդ տեղեկությունները (ներառյալ՝ փաստաթղթերը) կարող են հավաքվել և պահպանվել թղթային կամ էլեկտրոնային եղանակով:

5.22. Օրենքով պահանջվող և Ընկերության կողմից պահպանվող տեղեկությունները (ներառյալ՝ փաստաթղթերը) պետք է բավարար լինեն Լիազոր մարմնի կամ, օրենքով սահմանված դեպքերում, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների, ինչպես նաև վարույթի հանրային մասնակիցների կողմից հարցվող հաճախորդների, գործարքների կամ գործարար հարաբերությունների վերաբերյալ յուրաքանչյուր դեպքում ամբողջական ու լիարժեք տեղեկությունների տրամադրման համար:

5.23. Տեղեկությունները (ներառյալ՝ փաստաթղթերը) պետք է ժամանակին և օրենքով սահմանված կարգով հասանելի լինեն իրավասու վերահսկող և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների, վարույթի հանրային մասնակիցների, ինչպես նաև աուդիտորների համար:

5.24. Օրենքով սահմանված պահպանման ենթակա տեղեկությունները (ներառյալ՝ փաստաթղթերը) պետք է հաշվառվեն: Հաշվառումը պետք է կատարվի այնպես, որ անհրաժեշտության դեպքում հնարավորություն լինի վերականգնել այն աշխատակցի տվյալները, ով իրականացրել է հաճախորդի պատշաճ ուսումնասիրությունը կամ պահպանման ենթակա տեղեկությունների (ներառյալ՝ փաստաթղթերի) ձեռքբերմանն ուղղված այլ գործողությունները:

5.25. Ընկերությունը պետք է ապահովի պահպանվող տեղեկությունների (ներառյալ փաստաթղթերի) անվտանգությունը և գաղտնիությունը:

ԳԼՈՒԽ 6. ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԸ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄԸ, ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ ԵՎ ՄԵՐԺՈՒՄԸ

ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԸ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 6.1. Գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու գործընթացը իրականացվում է ներքին դիտարկումների մարմնի աշխատակցի կողմից՝ Օրենքով, Օրենքի հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով, ինչպես նաև սույն Կանոնակարգով սահմանված կարգով:
- 6.2. Գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու գործընթացը սկսվում է ինչպես ներքին և արտաքին ազդակների ստացման դեպքում, այնպես էլ Ներքին դիտարկումների մարմնի նախաձեռնությամբ, բոլոր այն դեպքերում, երբ.
- առկա է հնարավոր համընկնում հաճախորդի կամ գործարքի մյուս կողմի տվյալների և ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց կամ Լիազոր մարմնի հանձնարարականներում նշված այլ անձանց նույնականացման տվյալների միջև,
 - դիտարկվող իրավիճակը ամբողջությամբ կամ մասամբ համապատասխանում է կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշներին կամ տիպաբանություններին,
 - կնքված կամ առաջարկվող գործարքի կամ գործարար հարաբերության կատարման տրամաբանությունը, շարժը (դինամիկան) կամ այլ հանգամանքներ հիմք են տալիս ենթադրելու, որ այն կարող է իրականացվել ՓԼ/ԱՖ նպատակով,
 - առկա են ներքին իրավական ակտերով սահմանված՝ գործարքի կամ գործարար հարաբերության կասկածելիության մասին վկայող այլ հանգամանքներ:
- 6.3. Ներքին ազդակներ են համարվում հաճախորդներին սպասարկող ստորաբաժանումների աշխատակիցների, Ընկերության կառավարման մարմինների, ներքին աուդիտորի, ինչպես նաև Ներքին դիտարկումների մարմնի կողմից ներքին իրավական ակտերով սահմանված կարգով և ժամկետներում փոխանցված ազդակները:
- 6.4. Արտաքին ազդակներ են համարվում Լիազոր մարմնից, իրավասու մարմիններից, այլ հաշվետու անձանցից, օտարերկրյա գործընկերներից, ինչպես նաև տեղեկատվության սահմանափակ մատչելիությամբ և հանրամատչելի աղբյուրներից ստացված ազդակները:

- 6.5. Ներքին դիտարկումների մարմինը սույն Կանոնակարգի 6.2 կետի 1-ին ենթակետով սահմանված այն դեպքերում, երբ առկա է հնարավոր համընկնում.
- ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց նույնականացման տվյալների հետ, անմիջապես իրականացնում է համապատասխան համադրումներ և դրական համընկնման, ինչպես նաև այն դեպքում, երբ չի հաջողվում հավաստիանալ դրական համընկնման բացակայության հարցում, Օրենքով սահմանված կարգով Լիազոր մարմինն ներկայացնում է կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն և ձեռնարկում է ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց գույքի սառեցման գործընթացով նախատեսված միջոցառումները,
 - Լիազոր մարմնի հանձնարարականներում նշված այլ անձանց նույնականացման տվյալների հետ, հանձնարարականներում նշված ժամկետներում իրականացնում է համապատասխան համադրումներ և դրական համընկնման, ինչպես նաև այն դեպքում, երբ չի հաջողվում հավաստիանալ դրական համընկնման բացակայության հարցում, կատարում է հանձնարարականներով սահմանված գործողությունները:
- 6.6. Ներքին դիտարկումների մարմինը սույն Կանոնակարգի 6.2 կետի 2-4 ենթակետերով սահմանված դեպքերում ողջամիտ ժամկետում կատարում է համակողմանի վերլուծություն՝ օգտվելով հաճախորդի պատշաճ ուսումնասիրության շրջանակներում հավաքված և լրացուցիչ ձեռք բերվող տեղեկատվությունից, անհրաժեշտության դեպքում ճշտումներ է կատարում ՀՀ ԿԲ ՖԴԿ-ի հետ և եթե գործարքը կամ գործարար հարաբերությունը որակում է որպես կասկածելի, Օրենքով սահմանված կարգով Լիազոր մարմինն ներկայացնում է կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն, ինչպես նաև ձեռնարկում է Օրենքով նախատեսված այլ միջոցառումներ:
- 6.7. Եթե ներքին և արտաքին ազդակների հիման վրա, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ կատարած վերլուծության արդյունքում ներքին դիտարկումների մարմինը գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի չի որակում, և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն չի տրամադրում Լիազոր մարմինն, ապա գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի չորակելու հիմնավորումները, կատարված եզրահանգումները, վերլուծության ընթացքը և արդյունքները փաստաթղթավորվում ու պահպանվում են Օրենքով սահմանված կարգով և ժամկետում (առնվազն 5 տարվա ընթացքում):
- 6.8. Գործարքը կամ գործարար հարաբերությունը համարվում է կասկածելի, եթե.

- գործարքի (գործարար հարաբերության) պայմանները չեն համապատասխանում հաճախորդի գործարար բնութագրին, ձեռնարկատիրական գործունեության տվյալ բնագավառում սովորաբար կնքվող նման գործարքների (գործարար հարաբերությունների) պայմաններին կամ գործարար շրջանառության սովորույթներին,
- առկա են բավարար հիմքեր կասկածելու, որ գործարքում կամ գործարար հարաբերությունում ներգրավված գույքը ստացվել է հանցավոր ճանապարհով,
- կնքված կամ առաջարկվող գործարքի կամ գործարար հարաբերության կատարման տրամաբանությունը, շարժը (դինամիկան) կամ այլ հանգամանքներ հիմք են տալիս ենթադրելու, որ այն կարող է իրականացվել ՓԼ/ԱՖ նպատակով,
- ֆիզիկական անձը, ով փոխկապակցված է որևէ իրավաբանական անձի հետ, իր անունից այլ իրավաբանական անձի փոխանցում (տրամադրում) է գումարներ (արժեթղթեր), որն ակնհայտորեն իրականացվում է այդ իրավաբանական անձանց միջև պայմանագրային պարտավորությունների կատարման նպատակով կամ այդ իրավաբանական անձանց միջև այլ կերպ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար:

ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄԸ, ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ ԵՎ ՄԵՐԺՈՒՄԸ

- 6.9. Ընկերությունը ՓԼ/ԱՖ կասկածի առկայության դեպքում իրավունք ունի մինչև 5 օրով, իսկ պարտականությունների պատշաճ կատարմանն ուղղված հանձնարարականներ տալու, այդ թվում՝ իր տրամադրած նույնականացման տվյալների, կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշների կամ տիպաբանությունների հիման վրա գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու, կասեցնելու, գործարքի կատարումը կամ գործարար հարաբերության հաստատումը մերժելու, դադարեցնելու կամ հաճախորդի հավելյալ ուսումնասիրություն իրականացնելու հանձնարարականներ տալու դեպքերում պարտավոր է 5 օրով կասեցնել գործարքը կամ գործարար հարաբերությունը, և այդ մասին անմիջապես Օրենքով նախատեսված կարգով կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն տրամադրել Լիազոր մարմնին:
- 6.10. Լիազոր մարմինն իրավասու է գործարքը կամ գործարար հարաբերությունը մինչև 15 օրով կասեցնելու՝ տրամադրված հաշվետվությունների, ֆինանսական հետախուզության օտարերկրյա մարմինների հարցումների, վերահսկող և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների, ինչպես նաև վարույթի հանրային մասնակիցների ներկայացրած կամ այլ տեղեկությունների վերլուծությունների հիման վրա: Գործարքը կամ գործարար

հարաբերությունը կասեցնելու մասին Լիազոր մարմնի որոշումը պետք է կատարվի անմիջապես՝ Ընկերության կողմից ստանալու պահից:

- 6.11. Կասեցման ժամկետը Լիազոր մարմնի հիմնավոր կարծիքով երկարաձգելու անհրաժեշտության դեպքում Լիազոր մարմինը որոշում է կայացնում կասեցման ժամկետը մինչև 30 օրով երկարաձգելու մասին: Սույն մասում նշված ժամկետում Լիազոր մարմնի որոշումը Ընկերությանը չտրամադրվելու դեպքում կասեցման մասին որոշումը համարվում է ուժը կորցրած:
- 6.12. Ընկերության կամ Լիազոր մարմնի՝ գործարքը կամ գործարար հարաբերությունը կասեցնելու մասին որոշումը, մինչև կասեցման ժամկետի ավարտը կարող է ուժը կորցրած ճանաչել միայն Լիազոր մարմինը՝ իր նախաձեռնությամբ կամ Ընկերության միջնորդությամբ, եթե պարզվի, որ ՓԼ/ԱՖ կասկածը հիմնավոր չէ:
- 6.13. Այն դեպքում, երբ հնարավոր չէ իրականացնել Օրենքի 16-րդ հոդվածի 1-7-րդ մասերով նախատեսված պարտականությունները, կամ Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն գործարքի կամ գործարար հարաբերության հաստատման մերժման հանձնարարականի ստացման դեպքերում Ընկերությունը մերժում է գործարքի կատարումը կամ գործարար հարաբերության հաստատումը և դիտարկում է դրա՝ Օրենքի 7-րդ հոդվածի համաձայն կասկածելի որակելու հարցը:
- 6.14. Ընկերությունը գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելիս՝ հիմք է ընդունում Օրենքի, ՀՀ ԿԲ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման բարձր ռիսկի և կասկածելիության չափանիշների վերաբերյալ» ուղեցույցի և սույն Կանոնակարգի պահանջները:

ԳԼՈՒԽ 7. ՓԼ/ԱՖ ԵՎ ԶՈՁ ՏՖ ՌԻՍԿԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

- 7.1. Ընկերությունը հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն իրականացնելու համար մշակել և ներդրել է «ՓԼ/ԱՖ ԵՎ ԶՈՁ ՏՖ ռիսկերի բացահայտման եվ գնահատման» կանոնակարգ, որում սահմանված ռիսկերի և կասկածելիության չափանիշների հիման վրա բացահայտում և գնահատում է հնարավոր կամ առկա ռիսկերը, կասկածելի գործարքները և ապահովում է ռիսկերին համարժեք միջոցների ձեռնարկումը:
- 7.2. Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման, ինչպես նաև զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման ռիսկերը գնահատելիս, մինչև ռիսկի ընդհանուր մակարդակը բնորոշելը և ռիսկերի զսպման համապատասխան մակարդակ սահմանելը, Ընկերությունը հաշվի է առնում ռիսկի բոլոր գործոնները և իրականացնում է տարբերակված միջոցառումներ՝ ռիսկի տեսակին և մակարդակին համապատասխան:
- 7.3. Ընկերությունը, ի թիվս փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման այլ ռիսկերի, բացահայտում և գնահատում է նաև ծառայությունների նոր տեսակների մատուցման կամ դրանց մատուցման եղանակների գործարկման, ինչպես նաև նոր կամ զարգացող տեխնոլոգիաների կիրառման հետ կապված հնարավոր և առկա ռիսկերը: Ռիսկերի բացահայտումը և գնահատումն իրականացնում է համապատասխանաբար մինչև ծառայությունների նոր տեսակների մատուցումը կամ դրանց մատուցման եղանակների գործարկումը կամ նոր կամ զարգացող տեխնոլոգիաների կիրառումը:
- 7.4. ՓԼ/ԱՖ ռիսկի յուրաքանչյուր տեսակ բնութագրվում է դրան յուրահատուկ չափանիշներով և բնութագրերով, որոնց հնարավոր ազդեցությունը գնահատելու միջոցով կարելի է գալ եզրահանգման ռիսկի տվյալ տեսակի առկայության և մակարդակի վերաբերյալ:
- 7.5. Ընկերությունը հաճախորդին կամ գործարքը (գործարար հարաբերությունը) դասակարգելիս՝ կիրառում է Ռիսկի հետևյալ չափանիշները.
- ✓ բարձր ռիսկի չափանիշ,
 - ✓ ցածր ռիսկի չափանիշ,
 - ✓ միջին (ստանդարտ) ռիսկի չափանիշ:
- 7.6. Ընկերությունը պարտավոր է Բարձր ռիսկի չափանիշների առկայության դեպքում իրականացնել հաճախորդի հավելյալ ուսումնասիրություն, այսինքն՝ կիրառել հաճախորդի պատշաճ ուսումնասիրության գործընթացի ընդլայնված

ընթացակարգ, որը թույլ է տալիս ավելի համապարփակ պատկերացում կազմել հաճախորդի ինքնության և գործարար բնութագրի մասին:

- 7.7. Ընկերությունը կասկածելիության չափանիշների առկայության դեպքում պարտավոր է դիտարկել գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու և լիազոր մարմնին հաշվետվություն տրամադրելու հարցը, այսինքն՝ կատարել համակողմանի վերլուծություն, որը թույլ է տալիս հաստատել կամ ժխտել գործարքի կամ գործարար հարաբերության ՓԼ/ԱՖ առնչության հետ կապված կասկածները:
- 7.8. Հաճախորդների ռիսկի դասի վերաբերյալ տեղեկատվությունը համարվում է ծառայողական գաղտնիք, ենթակա չէ հրապարակման և հասանելի է միայն սույն Կանոնակարգով սահմանված ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում ներգրավված համապատասխան աշխատակիցներին:

ԳԼՈՒԽ 8. ՆԵՐՔԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՐՄՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑԸ ԵՎ ՆՐԱ ԿԱՏԱՐԱԾ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

- 8.1. Ընկերությունում փողերի լվացման, ահաբեկչության և զանգվածային ոչնչացման զենքի տարածման կանխարգելման գործառույթները դրվում են Ներքին դիտարկումների մարմնի աշխատակցի վրա, որը սահմանված գործառույթներն իրականացնելիս անկախ է, ունի Ավագ Ղեկավարության կարգավիճակ: Սույն կանոնակարգի իմաստով Գործադիր տնօրենն է կատարում Ներքին դիտարկումների մարմնի աշխատակցի պարտականությունները:
- 8.2. Ներքին դիտարկումների մարմնի աշխատակիցն իր գործառույթներն իրականացնում է միանձնյա կարգով, սակայն անհրաժեշտության դեպքում օժանդակում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում իրավասու այլ աշխատակիցներին:
- 8.3. Ընկերության աշխատակիցները պարտավոր են Ներքին դիտարկումների մարմնի աշխատակցի պահանջով նրան ներկայացնել ցանկացած տեղեկատվություն, որը վերջինիս կարծիքով անհրաժեշտ կլինի Կանոնակարգով նախատեսված գործառույթներն իրականացնելու և փողերի լվացումն ու ահաբեկչության ֆինանսավորումը կանխարգելելու համար:
- 8.4. Ներքին դիտարկումների մարմնի աշխատակիցը վերջնական որոշում է կայացնում գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու, կասեցնելու, իրականացումը մերժելու կամ դադարեցնելու, ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց գույքը սառեցնելու վերաբերյալ, ինչպես նաև ապահովում է Լիազոր մարմնին Օրենքով սահմանված հաշվետվությունների տրամադրումը, հաշվետվություն տրամադրող անձի կողմից

Օրենքով և դրա հիման վրա ընդունված իրավական ակտերով սահմանված այլ գործառույթների կատարումը:

- 8.5. Ներքին դիտարկումների մարմնի աշխատակցին պետք է ուղղակիորեն և անմիջապես հասանելի լինեն Ընկերության կողմից ձեռք բերվող ու պահպանվող՝ օրենքով սահմանված տեղեկությունները (ներառյալ՝ փաստաթղթերը):
- 8.6. Ներքին դիտարկումների մարմնի աշխատակիցը պարբերաբար, բայց ոչ ուշ, քան կիսամյակը մեկ անգամ ուսումնասիրում է հաշվետվություն տրամադրող անձի կատարած գործարքների և հաստատած գործարար հարաբերությունների, կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների ու աշխատակիցների գործողությունների համապատասխանությունը օրենքին և դրա հիման վրա ընդունված իրավական ակտերին: Ուսումնասիրության արդյունքների, ինչպես նաև Լիազոր մարմնի կողմից առաջադրված այլ հարցերի վերաբերյալ ներքին դիտարկումների մարմինը հաշվետվություն է ներկայացնում Լիազոր մարմնի սահմանած՝ հաշվետվություն տրամադրող անձի իրավասու մարմնին:
- 8.7. Ներքին դիտարկումների մարմնի աշխատակիցն իրականացնում է հետևյալ գործառույթները.
 - ապահովում է Ընկերության անունից Լիազոր մարմնին տեղեկությունների տրամադրումը, ինչպես նաև Ընկերության կապը Լիազոր մարմնի հետ,
 - կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության բացահայտման նպատակով իրականացնում է վերլուծություններ,
 - պահպանում է կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության բացահայտման նպատակով իրականացված վերլուծությունների արդյունքները,
 - ապահովում է հաճախորդի և գործարքի կամ գործարար հարաբերության ռիսկի գնահատումը,
 - գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու, կասեցնելու, իրականացումը մերժելու կամ դադարեցնելու, ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց գույքը սառեցնելու հարցը, ըստ անհրաժեշտության, քննարկում է գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու գործընթացի ներքին ազդակ տրամադրած համապատասխան աշխատակցի հետ,
 - մշակել ներքին իրավական ակտեր, դրանք ներկայացնել խորհրդի հաստատմանը,
 - իրականացնել ներքին իրավական ակտերի արդյունավետության մոնիտորինգ, ներկայացնել առաջարկներ դրանց բարելավման վերաբերյալ,
 - իրականացնել խորհրդի հանձնարարած այլ գործառույթներ այնքանով, որքանով դա չի սահմանափակում ներքին դիտարկումների մարմնի անկախությանը:
 - իրականացնում է Օրենքով, սույն Կանոնակարգով և Օրենքի հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով սահմանված այլ գործառույթներ:

- 8.8. Սույն կանոնակարգի 8.6. կետով սահմանված հաշվետվությունը նվազագույնը պետք է ներառի՝
- պարտադիր տեղեկացման ենթակա գործարքների թիվը, կասկածելի գործարքների և գործարար հարաբերությունների թիվը և համառոտ նկարագրությունը,
 - այն գործարքների և գործարար հարաբերությունների թիվը և ամփոփ նկարագրությունը, որոնց վերաբերյալ իրականացվել են վերլուծություններ, սակայն չեն որակվել կասկածելի,
 - հաշվետվություն տրամադրող անձի կասեցրած, իրականացումը մերժած կամ դադարեցրած գործարքների և գործարար հարաբերությունների թիվը և համառոտ նկարագրությունը, յուրաքանչյուր կասեցված գործարքի կամ գործարար հարաբերության արժեքը,
 - սառեցված գույքի չափը,
 - Ընկերության աշխատակիցների գործողությունների արդյունքում Օրենքի, սույն կանոնակարգի և Օրենքի հիման վրա ընդունված այլ իրավական ակտերի պահանջների խախտման դեպքերը,
 - ներքին իրավական ակտերով սահմանված այլ տեղեկություններ:
- 8.9. Գործող օրենսդրության ուսումնասիրության և կատարված վերլուծությունների արդյունքում Ներքին դիտարկումների մարմնի աշխատակիցը, անհրաժեշտության դեպքում, ներկայացվող հաշվետվությանը կից ներկայացնում է նաև իր կողմից մշակված, Ընկերության Կանոնակարգի փոփոխությունների և լրացումների նախագիծը: Նշված նախագծի քննարկումից հետո այն ներկայացվում է Խորհրդի հաստատմանը:

ԳԼՈՒԽ 9. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻԴԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

- 9.1. Ընկերության ներքին աուդիտորը եռամսյակը մեկ անգամ ստուգումներ է իրականացնում Ներքին դիտարկումների մարմնի աշխատակցի նախատեսված պարտականությունների և գործառույթների պատշաճ իրականացումը վերստուգելու համար:
- 9.2. Ներքին աուդիտորն Ընկերության Տնօրենների խորհրդին ներկայացվող եռամսյակային հաշվետվության մեջ ներկայացնում է իր գնահատականները և բացահայտումները՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման հարցերի վերաբերյալ:
- 9.3. Ընկերությունը կարող է Լիազոր մարմնի սահմանած կարգով, Լիազոր մարմնի պահանջով կամ իր նախաձեռնությամբ հրավիրել արտաքին աուդիտ՝

վերստուգելու փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի օրենսդրության ներդրման և արդյունավետության մակարդակը:

ԳԼՈՒԽ 10. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄ

- 10.1. Ընկերությունը կազմակերպում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման թեմայով պարբերաբար ուսուցում խորհրդի, գործադիր մարմնի, ներքին դիտարկումների մարմնի, հաճախորդների սպասարկման և ներքին աուդիտի գործառույթներ իրականացնող, ինչպես նաև փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում իրավասու այլ աշխատակիցների համար: Նոր աշխատակիցների համար ՓԼ/ԱՖ կանխարգելման թեմայով ուսուցումը պետք է կազմակերպվում է աշխատանքի ընդունումից հետո երեք ամսվա ընթացքում:
- 10.2. ՓԼ/ԱՖ կանխարգելման թեմայով դասընթացները կազմակերպվում են Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակցի կողմից, առնվազն տարին երկու անգամ և նվազագույնը ներառում են.
 - ծանոթացում ՀՀ օրենսդրական ակտերի և ՀՀ ԿԲ նորմատիվ ակտերի հետ, ինչպես նաև ՓԼ/ԱՖ դեմ պայքարի հարցերով խորհրդակցական բնույթի ակտերի հետ,
 - ծանոթացում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի վերաբերյալ Ընկերության քաղաքականության և ներքին իրավական ակտերի հետ (այդ թվում՝ հաճախորդի պատշաճ ուսումնասիրության և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն տրամադրելու մասով):
 - ծանոթացում ՓԼ/ԱՖ ռիսկերի գնահատման չափանիշներին:
- 10.3. Դասընթացների անցկացման ժամանակացույցը հաստատվում է Ընկերության Գործադիր տնօրենի կողմից՝ հաշվի առնելով Ընկերության աշխատակիցների ծանրաբեռնվածությունը և աշխատանքային գրաֆիկը:
- 10.4. Իրականացրած ուսուցման նյութերը, դրանց մասնակցած աշխատակիցների տվյալները և մասնակցությունը հավաստող փաստաթղթերը հաշվառվում են և պահպանվում առնվազն 5 տարի ժամկետով:

ԳԼՈՒԽ 11. ԱՆՑՈՒՄ ԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 11.1. Սույն Կանոնակարգն ուժի մեջ է մտնում «Փրայմ Կապիտալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության Տնօրենների խորհրդի կողմից հաստատվելու պահից:
- 11.2. Սույն Կանոնակարգն ուժը կորցրած է ճանաչվում «Փրայմ Կապիտալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության Տնօրենների խորհրդի կողմից այն ուժը կորցրած ճանաչելու պահից:
- 11.3. Սույն Կանոնակարգի փոփոխություններն ու լրացումները ուժի մեջ են մտնում «Փրայմ Կապիտալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության Տնօրենների խորհրդի կողմից դրանք հաստատելու պահից:
- 11.4. ՓԼ/ԱՖ կանխարգելման հետ կապված այն դրույթները, որոնք չեն կարգավորվում սույն Կանոնակարգով՝ կարգավորվում են Օրենքով, ՀՀ ԿԲ իրավական ակտերով, Ընկերության այլ ներքին իրավական ակտերով և Ընկերության Գործադիր տնօրենի կարգադրություններով:



Փրայմ Կապիտալ ՍՊԸ

ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Հաճախորդի անունը ազգանունը (անվանումը), անհատականացնող տվյալները	
Գործարքի էությունը	
Գործարքը կասկածելի համարելու հիմքերը	
Ընկերության աշխատակցի անունը, ազգանունը	
Գործարքի կատարման համար նախատեսված ժամկետները	
Կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը	

Տեղեկացում տրամադրելու օրը, ժամը _____

Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակցի որոշումը

Որոշման կայացման օրը, ժամը _____



Փրայմ Կապիտալ ՍՊԸ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կենսական շահերի կենտրոնի վերաբերյալ

Ես՝ _____,

(Ֆիզիկական անձ հաճախորդի/իրավաբանական անձ հաճախորդի/իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող հաճախորդի գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը)

հայտարարում եմ, որ իմ կամ _____

(իրավաբանական անձ հաճախորդի/իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող հաճախորդի անվանումը)

կենսական շահերի կենտրոն է հանդիսանում _____, քանի որ.

➤ Ֆիզիկական անձանց համար

- բնակվում եմ այնտեղ,
- ընտանիքս բնակվում է այնտեղ,
- բնակելի տունս գտնվում է այնտեղ,
- անձնական հիմնական գույքս գտնվում է այնտեղ,
- ընտանեկան հիմնական գույքս գտնվում է այնտեղ,
- հանդիսանում է իմ տնտեսական գործունեության հիմնական վայրը,
- հանդիսանում է իմ մասնագիտական գործունեության հիմնական վայրը,
- այլ _____:

➤ Իրավաբանական անձանց/ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող հաճախորդների համար

- ընկերությունը գրանցված է այնտեղ,
- ընկերությունը հողիինգային խմբի անդամ է, որի մայր ընկերությունը գրանցված է այնտեղ,
- ընկերությունը հարկային ռեզիդենտ է այնտեղ,
- այլ _____:

Պարտավորվում եմ նաև գործարար հարաբերության ընթացքում կենսական շահերի կենտրոնի փոփոխության դեպքում տեղյակ պահել Ձեզ:

(Ստորագրություն օր/ամիս/տարի)

Սույն հայտարարությունը լրացվում է միայն օտարերկրյա ֆիզիկական անձ, օտարերկրյա իրավաբանական անձ կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող հաճախորդների կողմից:



Փրայմ Կապիտալ ՍՊԸ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Իրական շահառուի առկայության (բացակայության) վերաբերյալ

Ես՝ _____ս, _____թ. «Փրայմ Կապիտալ» ՍՊԸ-ի հետ հաստատելով գործարար հարաբերություն կամ գործարքում հանդես գալով որպես _____, հայտարարում եմ, որ գործարար հարաբերության մեջ կամ գործարքում իրական շահառու է -----
-----ը:

Պարտավորվում եմ նաև գործարար հարաբերության ընթացքում իրական շահառուի փոփոխության դեպքում տեղյակ պահել Ձեզ:

_____թ.

ստորագրություն